ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 21 - 22 (16518) ՇԱԲԱԹ, 18 ՄԱՐՏԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Թբիլիսիի «Էքսպո Ջորջիա» ցուցասրահում, մարտի 16-ին, երկրի կառավարությունը ներկայացրեց գյուղատնտեսության զարգացման 2017-2020 թվականների ռազմավարությունը:

Ինչպես տեղեկացրել է գերատեսչության մամլո ծառայությունը, ռազմավարությունը ներկայացնում է ոլորտի զարգացման հանգուցային հարցերը:

Միջոցառումը, որին ներկա էր Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, գյուղատնտեսության զարգացման ռազմավարության ծրագիրն ու գործունեության ծրագիրը ներկայացրեց գյուղատնտեսության նախարար Լեւան Դավիթաշվիլին:

Ռազմավարության շնորհանդեսի միջոցառմանը ելույթ ունեցան նաեւ Վրաստանում Եվրամիության դեսպան Յանոշ Հերմանը եւ Վրաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) մշտական ներկայացուցիչ Նիլս Սկոտը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՄԵՆ ԻՆՉ ԱՐՎՈՒՄ Է ԳՅՈՒՂԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ելույթ ունենալով գյուղի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարության շնորհանդեսին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ իշխանությունների կողմից ամեն ինչ արվում է գյուղի արդիականացման համար, այն հաշվով, որպեսզի նվազագույնի հասցվի քաղաքի ու գյուղի բնակիչների կենսամակարդակի տարբերությունը:

Վարչապետի պարզաբանմամբ, ռազմավարությունը, որը հենված է եվրոպական փորձի վրա, կանխագծում է գյուղի զարգացման հիմնական ուղղությունները: Նա շնորհակալություն հայտնեց միջազգային գործընկերներին, Եվրամիությանն ու ՄԱԿ-ի զարգացման ծրագրին, որոնց աջակցությամբ եւ օգնությամբ էլ կառավարությունը իրավասու դարձավ մշակելու վերոնշյալ ռազմավարությունը:

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ՝ ԲԱՔՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ

Մարտի 16-17-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին մասնակցեց եւ ելույթ ունեցավ Բաքվի հինգերորդ գլոբալ գագաթաժողովում, որին մասնակցեցին նաեւ Լատվիայի, Մակեդոնիայի, Ալբանիայի, Մոնտենեգրոյի նախագահները:

Միջազգային գագաթաժողովի շրջանակներում՝ Վրաստանի նախագահը հանդիպում ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Հանդիպմանը Վրաստանի եւ Ադրբեջանի նախագահները քննարկեցին երկկողմ հարաբերությունների խորացման հետ առնչվող հարցեր:

Ադրբեջանի նախագահին առընթեր պետական կառավարման ակադեմիայում տեղի ունեցավ Գիորգի Մարգվելաշվիլուն պատվավոր դոկտորի կոչում շնորհելու հանդիսավոր արարողությունը:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՄՈՍԿՎԱ

Մարտի 14-15-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը երկօրյա պաշտոնական այցով գտնվում էր Ռուսաստանի Դաշնությունում:

Հայաստանի նախագահի գլխավորած պատվիրակության կազմում էին Հայաստանի փոխվարչապետ, միջազգային ինտեգրման եւ բարեփոխումների նախարար Վաչե Գաբրիելյանը, պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը, տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Սուրեն Կարայանը, տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը, գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը եւ պաշտոնատար այլ անձինք:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՌՈՒՑՎԵՆ ՀԻՆ ԵՎ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՎՐԱ»

Երեւանում անցկացվեց միջազգային երկխոսության «Վալդայ» ակումբի արտագնա նիստը:

Նիստում ելույթ ունեցավ Հայաստանի պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը: Իր խոսքում, անդրադառնալով հայ-վրացական հարաբերությունների ներկա մակարդակին եւ հեռանկարներին, նա հայտարարեց, որ Հայաստանը եւ Վրաստանը պետք է հարաբերությունները կառուցեն՝ հիմնվելով հին եւ եղբայրական կապերի վրա:

«Վրաստանի հետ Հայաստանը ջերմ ու բարեկամական հարաբերություններ ունի: Մենք Վրաստանի հետ հարաբերությունները պետք է կառուցենք՝ նկատի ունենալով երկու ազգերի հին եւ եղբայրական կապերը»,- ընդգծեց Վիգեն Սարգսյանը:

Նա հավելեց, որ Հայաստանը եւ Վրաստանը սերտ աշխատում են՝ հույս հայտնելով, որ հայ-վրացական հարաբերություններում դրական շարժընթաց կլինի:

ԻՐԱՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

Մարտի 11-ին Բաթումիում պարեկային ոստիկանության աշխատակիցն ավտոմեքենայի վարորդին տուգանք է նշանակել ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման համար: Ականատեսներից ոմանք պնդում են, որ ոստիկանը նաեւ վիրավորանք է հասցրել վարորդին: Վարորդին պաշտպանել են տեղացի բնակիչները, որոնք ծեծկռտոց են սարքել իրավապահնե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՑԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՑԱԴՐԵՑ ԻՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԴԵՄՔԸ»

Մեկնաբանելով Բաթումիում ծավալված իրադարձությունները, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ վրացական պետությունը ցուցադրեց իր մարդկային դեմքը:

«Դա այն դեմքն է, որը մենք կառուցել ենք քայլ առ քայլ եւ դա այն փոփոխություններն են, որոնք կատարվել են 2012 թվականի ընտրություններից հետո: Վրաստանը դարձավ պետություն՝ կողմնորոշված դեպի մարդը»,- ասաց Կվիրիկաշվիլին: Նրա խոսքով, այսօր Վրաստանում այնպիսի իշխանություն է, որը առաջնորդվում է բացար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

ԲՈՒԺՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ՝ ԵԼՆԵԼՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ

Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարությունը փոփոխություններ է կատարում համընդհանուր առողջապահության ծրագրում, ըստ որի՝ ելնելով քաղաքացիների եկամուտներից, սպասարկումները կֆինանսավորի պետական ապահովագրությունը:

Համընդհանուր առողջապահության ծրագրում կատարվելիք փոփոխությունների հարցով նախարար Դավիթ Սերգեենկոն հրավիրեց հատուկ ասուլիս, որտեղ ներկայացվեցին ծրագրի նորամուծությունները:

Ինչպես նշեց նախարարը, համընդհանուր առողջապահության ծրագիրը կներառի վեց նպատակային խումբ: Երկրի ողջ բնակչությունը բաժանվում է վեց նպատակային խմբերի: Առաջին խմբում են. մինչեւ 5 տարեկան երեխաները, ուսանողները, կենսա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանում գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը մշակվել է երկրի կառավարության նախաձեռնությամբ, Եվրամիության (EU) եւ ՄԱԿ-ի երկու գործակալությունների՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի UNDP ե'ւ պարենի, ե'ւ գյուղատնտեսության կազմակերպության (FAO) աջակցությամբ, եվրոպական հարեւանության գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման ծրագրի (ENPARD) շրջանակներում:

Ինչպես նշեց գյուղատնտեսության նախարար Լեւան Դավիթաշվիլին, գյուղի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարությունում առանձնացվել են երեք հիմնական ուղղությունները: Դրանք են էկոնոմիկան եւ մրցունակությունը, սոցիալական հարցերն ու շրջակա միջավայրի պաշտպանությունը: «Այս երեք հիմնական ուղղություններն իրենց մեջ ներառում են մի շարք արմատական խնդիրներ, որոնք պետությունը կատարելու է համակարգված եւ դա կիրականացվի միջգերատեսչական համակարգման խորհրդի կողմից, որը կհաստատի հաջորդ տարիների ռազմավարության գործողության ծրագիրը, ապա կիրականացնի այդ ծրագրի կատարման մոնիտորինգը: Նշանակալից է նաեւ այն, որ մեր գործողություններում եւ ընդունած որոշումներում հաշվի կառնվեն տեղական նախաձեռնությունները»,- հայտարարեց Լեւան Դավիթաշվիլին եւ հավելեց, որ տեղական համապատասխան խմբեր արդեն գործում են երեք մունիցիպալիտետներում եւ առաջիկայում նման խմբեր կստեղծվեն մյուս երկրամասերում:

Նշենք, որ 2013-2019 թվականներին Վրաստանում եվրոպական հարեւանության գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման ծրագրի բյուջեն կազմում էր 102 միլիոն եվրո: Ծրագրի առաջին փուլի առաջնահերթությունը գյուղատնտեսության զարգացման աջակցությունն էր, իսկ երկրորդ փուլի նպատակը՝ գյուղում ապրող մարդկանց տնտեսական զարգացման հնարավորությունների մակարդակի բարձրացումն էր:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՇՈՒԿԱ

ՈՉԽԱՐԻ ՄՍԻ ԳԻՆԸ ԿՐԿՆԱՊԱՏԿՎԵԼ Է

Նախորդ տարվա համեմատությամբ, Վրաստանում ոչխարի գինը կրկնապատկվել է, ինչը պայմանավորված է այդ անասունների պակասորդով:

Եթե նախորդ տարվա դեկտեմբերի սկզբին մեկ կիլոգրամ ոչխարի մսի գինը արժեր 8 լարի, ապա այն հիմա կազմում է 15 լարի: Դա պայմանավորված է մսի այդ տեսակի արտահանման ծավալների մեծացման հետ: Վրացական ոչխարի մեծ պահանջարկ է վավերացվել Իրանում եւ Իրաքում:

Ոչխարաբուծության ոլորտի մասնագետները նշում են, որ միջնորդները կրկին ակտիվություն են ցուցաբերում, սակայն վաճառքի ենթակա անասուն գրեթե չի մնացել: Սկսած անցյալ տարվա աշնանից, արտահանվել է ավելի քան 2 հազար գլուխ ոչխար: Ներկայումս սպասվում են ոչխարի մոտ 250 հազար ծին, ինչը կարող է նշանակալիորեն կարգավորել ոչխարի պակասորդի հետ կապված հիմնախնդիրը:

Արտահանման համար պատրաստ վրացական ոչխարի գինը տատանվում է 180-220 լարիի շրջանակներում, այն դեպքում, երբ անցյալ տարի այն կազմում էր 90-100 լարի: Այսինքն, վերջին մեկ տարվա ընթացքում դրա գինը գրեթե կրկնապատկվել է: Շուկայում ոչխարի արտահանման հետ կապված միտումը ակնհայտորեն փոփոխված է, ինչը նշանակում է, որ դա ժամանակավոր երեւույթ է: Ոչխարի նկատմամբ պահանջարկը առանձնակի մեծանում է Ասիայի երկրներում: Մասնավորապես, Ադրբեջանում տասը օրվա ընթացքում իրացվեց 250 հազար ոչխարի միս: Դա մոտավորապես այն քանակությունն է, ինչի արտահանման հնարավորություն ունի Վրաստանը: Իրանում ոչխարի գլխաքանակը կազմում է 55 միլիոն, սակայն, չնայած դրան, այն Հայաստանից ներկրում է շուրջ 150 հազար գլուխ ոչխար:

Նշենք, որ 2016 թվականին Վրաստանից Քաթար եւ Սաուդյան Արաբիա է արտահանվել 11800 գլուխ անասուն, ինչի դրամական արտահայտությունը կազմել է 1 միլիոն ԱՄՆ դոլար: Ինչպես նշեցին գյուղատնտեսության նախարարությունում, առանձնակի շահագրգռվածություն են ցուցաբերում արաբական երկրները եւ դա պայմանավորված է Վրաստանի կենսաբանական մաքուր երկրի վարկանիշով:

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րի հետ: Ոստիկանությանը դիմադրություն ցույց տալու համար բերման է ենթարկվել վեց մարդ: Միջադեպից քիչ անց, բողոքի ակցիա է սկսվել պարեկային ոստիկանության նորանշանակ պետ Մալխազ Բատիաշվիլիի պաշտոնաթողության պահանջով: Քաղաքում անցկացվել է անկարգությունների մասնակիցների ձերբակալման գործողություն: ՆԳ նախարարության տվյալներով, բերման է ենթարկվել 40 իրավախախտ:

Վրաստանի ՆԳ նախարար Գիորգի Մղեբրիշվիլին հայտարարել է, որ դատարանը վարչական կալանքի է դատապարտել այն 40 անձանցից յոթին, որոնք բերման են ենթարկվել Բաթումիում տեղի ունեցած անկարգությունների կապակցությամբ:

«Խստիվ պատժվելու է յուրաքանչյուրը, ով մասնակցել է դրանց: Կատարվում է անձանց նույնականացում, քրեական գործ է հարուցված եւ հետաքննություն է սկսվել: Ներկայում յոթ մարդ է ձերբակալված վարչական խախտման համար, բերման ենթարկված 40 անձանցից մնացածները ազատ են արձակվել ստորագրությամբ, սակայն նրանց նկատմամբ վարչական վարույթը դադարեցված չէ, եւ նրանք անպայմանորեն կկանգնեն դատարանի առաջ: Անհրաժեշտ է սպասել հետաքննության արդյունքներին»,- հայտարարել է նախարարը:

Աջարիայի կառավարության ղեկավար Զուրաբ Պատարաձեն հայտարարել է լույս մարտի 12-ի գիշերը Բաթումիում տեղի ունեցած անկարգությունների հետեւանքով առաջացած նշանակալի վնասների մասին:

«Նվազագույնը տասը ավտոմեքենա է այրվել անկարգությունների վայրում, վնասված է ենթակառուցվածքը»,- ասաց նա:

Նրա խոսքով, Բաթումիի քաղաքապետարանը ներկայում զբաղվում է քաղաքին հասցված վնասի հաշվարկով: «Ստեղծված է հատուկ հանձնաժողով, եւ մոտ ժամանակում մենք կիմանանք վնասի ճշգրիտ չափերը»,- նշել է Պատարաձեն:

Աջարիայի պարեկային ոստիկանության գլխավոր վարչության պետ Կախա Բուխրաձեն, մեղադրանքները «զրպարտչական» անվանեց, իբր Աջարիայի տարածաշրջանի բնակիչներին ինքը «թաթար» է անվանել: Կախա Բուխրաձեն Բաթումիի բնակիչների որոշակի հատվածի կողմից իրեն ներկայացրած մեղադրանքի կապակցությամբ հայտարարեց. «Ընդհանրապես չեմ պատկերացնում, թե մարդկանց մոտ ինչպես կարող էր ծագել նման միտք: Հետեւաբար, այդ հարցով ոչ մի մեկնաբանություն եւ, բնականաբար, արդարացում չպետք է ներկայացնեմ, դա զրպարտչություն է»,- հայտարարեց Կախա Բուխրաձեն:

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՑԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՑԱԴՐԵՑ ԻՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԴԵՄՔԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ծակապես այլ գաղափարներով, եւ այսօր պետությունը կառուցվել է բացարձակապես այլ հիմունքներով:

Գիորգի Կվիրիկաշվիլին արձագանքեց նաեւ այն մեղադրանքներին, որոնք հնչեցին իշխանության հասցեին: Նրա խոսքով, անձամբ պատասխանատվություն է ստանձնում պետության համապատասխան արձագանքման համար: Վարչապետի հավաստմամբ, երկիրը պահպանեց կայունությունը՝ առանց մարդկանց խոշտանգման եւ հատուկ ծառայությունների օգտագործման: Թեպետ, ինչպես նշեց վարչապետը, տեղի ունեցածում ակնհայտորեն երեւում են կազմակերպիչները: «Դա ազգային շարժման մի մասն է, որը հրահրում էր մարդկանց, շահարկելով մարդկային զգացումները»:

Պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ



ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Brexit-ի ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱՎ

Մեծ Բրիտանիայի Եղիսաբեթ երկրորդ թագուհին պաշտոնապես հավանություն է տվել Brexit-ին վերաբերող օրենսդրությանը:

Այսպիսով օրենքն ուժի մեջ է մտել, եւ վարչապետ Թերեզա Մեյն իրավունք է ստացել միության կազմից Մեծ Բրիտանիայի դուրս գալու մասին ԵՄ-ին հարցում ուղարկել Լիսաբոնի պայմանագրի 50-րդ հոդվածին համապատասխան: Ավելի վաղ կառավարությունում հայտարարել են, որ ընթացակարգը կսկսվի մարտի վերջից ոչ շուտ:

Նշենք, որ մարտի 14-ին բրիտանական խորհրդարանը հաստատել է Brexit-ի գործընթացի գործարկման փաստաթուղթը՝ առանց ուղղումների:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱ

ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ

Նիդերլանդների եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունները խիստ լարվել են այն բանից հետո, երբ Նիդերլանդների կառավարությունը չեղարկեց Թուրքիայի արտգործնախարար Մեւլութ Չավուշօղլուի ինքնաթիռի վայրէջքի թույլտվությունը եւ արգելեց Թուրքիայում անցկացվելիք սահմանադրական հանրաքվեի քարոզարշավի շրջանակում ելույթ ունենալ իր երկրում: Ավելին, Նիդերլանդները Թուրքիայի ընտանիքի եւ սոցիալական հարցերով նախարարին «անցանկալի անձ» հայտարարեց ու արտաքսեց երկրից:

Ի պատասխան դրան, Չավուշօղլուն սպառնաց Նիդերլանդներին՝ ասելով, որ եթե իր թռիչքի թույլտվությունը չեղարկվի, իրենք կդիմեն պատժամիջոցների կիրառմանը: Նա երկրի կառավարության գործելաոճը «ֆաշիստական մոտեցում» էր որակել:

Թուրքիայի կողմից Նիդերլանդներին ֆաշիզմի մեջ մեղադրելու փորձերը «բացարձակապես կտրված են իրականությունից»: Այս մասին հայտարարել է Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը:

Տուսկին իր աջակցությունն է հայտնել Եվրահանձնաժողովի նախագահ Ժան Կլոդ Յունկերը, ով նշել է, որ թուրքական կողմը նման հայտարարություններով հեռու է գնում Եվրամիությանն անդամակցությունից:

Նշենք, որ Գերմանիայի Քյոլն քաղաքի իշխանությունները եւս մերժեցին Թուրքիայի պաշտոնական անձանց այդ քաղաքում հանրաքվեի քարոզչություն անցկացնելու հարցում:

ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԻ ԿՐՈՒՄԸ

Եվրոպայի քրեական դատարանի որոշմամբ, աշխատավայրում կրոնական խորհրդանիշերի, այդ թվում՝ գլխաշորերի կրումն արգելվում է: Ինչպես հայտարարեցին դատարանում, կրոնական, ինչպես նաեւ փիլիսոփայական կամ քաղաքական հայացքներն արտահայտող խորհրդանիշների կրման արգելումը խտրականության նշաններ չեն բովանդակում:

«Մտահոգված ենք, քանզի գտնում ենք, որ ընդունած որոշումը մահմեդական կանանց կկանգնեցնի կրոնական հայացքների եւ աշխատատեղի միջեւ ընտրության առջեւ»,- դատարանի ընդունած որոշման կապակցությամբ նշված է «Եվրոպայի կանայք ռասիզմի դեմ» կազմակերպության հայտարարության մեջ:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ՞ Է, ԱՐԴՅՈՔ, ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԳՆՈՒՄԸ

Սահմանադրական հանձնաժողովի անդամները կրկին անգամ քննարկեցին գյուղատնտեսության նշանակության հողերը օտարերկրացիներին վաճառելու հարցը, թեպետ այս անգամ էլ կոնկրետ որոշման չհանգեցին:

Հանձնաժողովի անդամները չեն կարողանում համաձայնության հանգել այն հարցում, թե ընդհանրապես արգելվելո՞ւ է, արդյոք, օտարերկրացիներին հողատարածքների վաճառումը: Տարաձայնություններ է առաջացնում նաեւ վերոնշյալ փոփոխությունները սահմանադրությունում գրանցելու հարցը:

Հատկանշական է, որ վերոնշյալ հարցի առթիվ ներկայացվել են մի քանի նախաձեռնություններ: Իրենց առաջարկություններն են ներկայացրել «Վրացական երազանքը», «Ժողովրդավարական շարժումը» եւ «Հայրենասերների ալյանսը»: Ըստ ներկայացված նախաձեռնությունների, օտարերկրյա քաղաքացիներին եւ քաղաքացիություն չունեցող անձանց գյուղատնտեսական նշանակության հողերի վաճառքը պետք է արգելվի: Դրան կտրականապես դեմ է ընդդիմության մի մասը, ինչպես նաեւ ոչ կառավարական առանձին կազմակերպությունների ներկայացուցիչները:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ

შემოსავლების სამსახური

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մարտի 15-ին, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության աջակցությամբ, Թբիլիսիում աշխատանքն սկսեց հարկային վարչությունների ներեվրոպական կազմակերպությունների (IOTA) հարկային վարչությունների կոնտակտային անձանց հերթական 24-րդ խորհրդաժողովը: Միջոցառմանը մասնակցում էին կազմակերպության 36 անդամ երկրների 50 ներկայացուցիչներ:

Խորհրդաժողովը աշխատանքային երկու օրվա ընթացքում քննարկեց այնպիսի նշանակալից հարցեր, ինչպիսիք էին անմիջականորեն կազմակերպության աշխատանքի յուրահատկությունը, կազմակերպության բյուջեի բաշխումը, անդամ երկրների կողմից հաշվետվության ներկայացման կարգը, կազմակերպության գործունեությունում այլ վարչությունների ներգրավման որակի գնահատումը, տեղեկատվության մատչելիությունը եւ այլն:

Միջոցառմանը մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեց Վրաստանի ֆինանսների նախարարի առաջին տեղակալ, եկամուտների ծառայության պետ Գիորգի Թաբուաշվիլին: Նա խոսեց հարկային ոլորտում կատարած բարեփոխումների մասին, առանձնակի ընդգծեց մասնագիտական փորձի յուրացման տեսանկյունից Վրաստանի եւ IOTA կազմակերպության միջեւ հաջող համագործակցությունը:

Նշենք, որ մեր եվրոպական կազմակերպությունն ընդգրկում է 46 երկրներ: Վրաստանը այդ կազմակերպության անդամ է դարձել 2004 թվականին:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔ

«ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱԲԽԱԶԻԱՅԻ ԻՆՔՆԱՀՌՉԱԿ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մարտի 12-ին ինքնահռչակ Աբխազիայի Հանրապետությունում անցկացվեցին այսպես կոչված խորհրդարանական ընտրություններ:

Ինչպես տեղեկացրել է այսպես կոչված Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, 35 ընտրատարածքներից 22-ում տեղի կունենա ընտրությունների երկրորդ փուլը, եւս մեկ ընտրատարածքում կանցկացվեն վերընտրություններ:

«Առայժմ ընտրվել են տասներկու պատգամավորներ: Երկրորդ փուլը մարտի 26-ին կանցկացվի 22 ընտրատարածքներում, մեկ ընտրատարածքում երկու ամիս անց՝ տեղի կունենան վերընտրություններ»,- հայտնել են ԿԸՀ-ում:

Միապալատ օրենսդրական մարմնում տեղերի համար 35 միամանդատ ընտրատարածքներում պայքարում էին 137 թեկնածուներ:

Ընտրություններին մասնակցում էին կառավարող «Աբխազիայի ժողովրդական միասնության համաժողովը», ընդդիմադիր «Ամցախարան»՝ եւ «Աինար» ու «Ժողովրդական ճակատ՝ հանուն արդարության եւ զարգացման» կենտրոնամետ կազմակերպությունները:

Առաջին փուլի արդյունքներով, արդեն ընտրված 13 պատգամավորների թվում են աբխազահայեր Լեւոն Գալստյանն ու Աշոտ Մինասյանը: Ընտրությունների երկրորդ փուլին մասնակցելու իրավունք են ստացել եւս երեք աբխազահայեր՝ Էրիկ Ռշտունին, Գալուստ Տրապիզոնյանն ու Լեւոն Դաշչյանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

«ՉՆԱՅԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ, «ՄԱԳԴՈՆԱԼԴՍԸ» ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌԵՍՏՈՐԱՆ ԲԱՑԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ»

«Հայաստանում «Մագդոնալդսը» ռեստորան բացելու մտադրություն չունի»՝ նման վերնագրով հոդվածներ են տպագրվել հայկական մամուլում:

Հայաստանյան լրատվամիջոցները ակտիվորեն քննարկում են մի քանի շաբաթ առաջ վրաց գործարար Թեմուր Ճղոնիայի՝ «Մագդոնալդսի» կողմից Հայաստանում ռեստորաններ բացելու հայտարարությունը: Իր խոսքում, Ճղոնիան նշել է, որ ինքը ստացել է Հայաստանում «Մագդոնալդսի» ցանց բացելու հավաստագիր: Հարցի հստակեցման համար իրենք դիմել են Եվրոպայի կենտրոնական գրասենյակ, որտեղ «Մագդոնալդսի» ռեստորանի բացման փաստը չեն հաստատել:

- «Մագդոնալդսը» ստուգում եւ վերլուծում է տնտեսական ու գործարար արդյունավետությունը, թե որքանով իրեն կարդարացնի նոր շուկայի իրացումը եւ նոր երկրում գործարարություն սկսելը: Տվյալ պահի դրությամբ, Հայաստանում ռեստորան բացելու մասին չենք մտածում,- հայկական գործակալությանը հայտարարել են «Մագդոնալդսի» եվրոպական կենտրոնական գրասենյակում:

Այդ լրատվամիջոցների տեղեկատվությամբ, «Մագդոնալդսը» պաշտոնապես դիմել է նաեւ Հայաստանի էկոնոմիկայի նախարարությանը: Ինչպես տեղեկացրել է գերատեսչության մամլո խոսնակը, ընկերությունը Հայաստանի շուկա մուտք գործելու փաստը չի հաստատել:

ԹԵՄՈՒՐ ՃՂՈՆԻԱ. «ՀԱՅԱՍՏԱՆԻՆ «ՄԱԳԴՈՆԱԼԴՍԸ» ԱՆՀՐԱԺԵՇՏ Է»

Արձագանքելով Հայաստանում «Մագդոնալդսի» ցանցի բացման կապակցությամբ հայկական լրատվամիջոցներում տարածված տեղեկատվությանը՝ գործարար Թեմուր Ճղոնիան նշեց, որ ներկա փուլում իրենք Երեւանում ռեստորանի համար տեղ են որոնում:

Նրա պարզաբանմամբ, Հայաստանին «Մագդոնալդսը» անհրաժեշտ է, եւ այդ հարցով իր հետ կապվել են հայկական լրատվամիջոցների ներկայացուցիչները:

- Եթե Երեւանում հարմար տեղ գտնենք, ապա կկառուցենք «Մագդոնալդսը», եթե չգտնենք, ապա չենք կառուցի: Ինչ վերաբերում է հավաստագրին, ապա բոլոր երկրներում ընդունված կարգ է, որ նախ պետք է հստակեցվի նախագծի հարմար վայրը, եւ ապա «Մագդոնալդսը» կներկայացնի դրա շինարարության հաստատումը:

Վրաստանում կառուցվել է «Մագդոնալդսի» 12 ռեստորան, եւ ես կենտրոնական գրասենյակի հետ անհարթություններ չունեմ: Վայրը, որն առաջարկել են, դուր չի գալիս: «Մագդոնալդսը» արժանի է ավելի լավ վայրի: Հետո կգնանք քաղաքապետարան եւ կներկայացնենք նախագիծը: Եթե նրանք համաձայնվեն, ապա կկառուցենք,- հայտարարեց Թեմուր Ճղոնիան:

ՆԵՐԴՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Ընթացիկ տարվա մարտի 16-ից հարկային սպասարկման գործակալները կգրանցվեն Վրաստանի Ազգային բանկի նախագահի կարգադրությամբ հաստատված նոր կարգով: Նոր կարգը մի կողմից սահմանում է նոր մոտեցումներ սպառողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից, մյուս կողմից՝ սահմանում է գործակալների գրանցման եւ կարգավորման իրավական շրջանակները:

Սպառողների իրավունքների պաշտպանության նպատակով գործակալներին սահմանված է կարգ՝ սպառողների բողոքների ընդունման եւ դրանց քննարկման ժամկետների մասին: Մասնավորապես, ներկայացված բողոքի քննարկման համար սահմանվել է առավելագույնս յոթ աշխատանքային օր: Փաստաթուղթը նախատեսում է նաեւ պահանջներ սպառողների դրամական միջոցների ներդրման եւ պաշտպանության, հարկային սպասարկումների կատարման ժամանակ գործակալների օգտագործման եւ միջնորդ ընկերություններին գործառույթների անցկացման իրավասության հանձնման կարգը:

ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆՆԵՐԻՆ ԿՏՐՎԵՆ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՕՐԵՐ ԵՎ ԱՐՁԱԿՈՒՐԴ

Վրաստանի խորհրդարանի բյուրոն գրանցել է «Զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխությունը, ըստ որի զորակոչայիններին կտրվեն հանգստյան օրեր եւ արձակուրդ:

Վերոնշյալ փոփոխությունը հանդիսանում է Վրաստանի պաշտպանության նախարարության բարեփոխման հատվածը, որը նախատեսում է զորակոչման համակարգի փոփոխություն եւ նախնական զինպատրաստության եռամսյա դասընթացի ներդնում: Դասընթացն անցնելուց հետո զորակոչայինները կհամարվեն լիարժեք զինծառայողներ:

Ներկայացված փոփոխությունների համաձայն, նախնական զինպատրաստության դասընթացին զորակոչայինները կունենան հանգստյան երեք շաբաթ եւ երեք կիրակի օրեր, իսկ դասընթացի ավարտից հետո՝ յուրաքանչյուր հանգստյան օր: Միակ բացառությունը կկազմի հանգստյան օրերին զորավարժությունների, պահակային ծառայության կամ կարգապահական նկատողության համընկնումը:

Նախնական զինպատրաստություն անցնելուց հետո, զորակոչայիններին կտրվի 15-օրյա արձակուրդի իրավունք, որը կարող է երկարաձգվել, ելնելով ընտանեկան հանգամանքներից կամ հարգելի պատճառով:

Հիշեցնենք, որ Վրաստանի զինված ուժերում պարտադիր զինծառայության ժամկետը կազմում է մեկ տարի:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(17 մարտի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.435	2.525
ԵՎՐՈ	2.597	2.744
ՌՈՒԲԼԻ	0.04	0.047
ԴՐԱՄ	0.0038	0.0056

Մարտի 10-ի համեմատությամբ, դոլարի կուրսը նվազել է 0,025 լարիով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թոշակառուները, սահմանափակ հնարավորություններ ունեցող անձինք, մանկավարժներն ու սոցիալապես անպաշտպանները, երկրորդ խումբն ընդգրկում է բարձր եկամուտ ունեցող քաղաքացիներին, երրորդը՝ միջին եկամուտով քաղաքացիներին, չորրորդ խմբում ընդգրկված են վարկանիշային 770 հազարից մինչեւ 100 հազար միավոր ունեցող քաղաքացիները: Հաջորդ երկու խմբերում ընդգրկված են 6-ից մինչեւ 18 տարեկանները եւ ցածր ու անկայուն եկամուտ ունեցող քաղաքացիները:

Նպատակային խմբում ընդգրկված է մոտ 1,7 միլիոն քաղաքացի: Նրանց համընդհանուր առողջապահության շրջանակներում տրվող սպասարկումները մնում են անփոփոխ: Այն նախատեսում է ընտանեկան բժշկի, ամբուլատորային սպասարկման, անհետաձգելի դեպքերի բուժման եւ ծրագրված վիրահատությունների ֆինանսավորումը: Բարձր եկամուտ, տարեկան ավելի քան 40 հազար լարիից ավելի եկամուտ ունեցող անձինք չեն կարողանա օգտվել պետական պահովագրությամբ նախատեսված բժշկական սպասարկումներից: Այդ խմբում ընդգրկված շուրջ 32 հազար քաղաքացիներ կկարողանան օգտվել համընդհանուր առողջապահության ծրագրի կողմից ներկայացվող մյուս ծառայություններից: Օրինակ՝ C հեպատիտի բուժման ծրագրից, ծննդաբերության եւ կեսարյան հատումով ծննդաբերությունների ֆինանսավորումից: «Անձը կարող է ունենալ բարձր եկամուտ, սակայն ընտանիքում կարող են լինել շատ անդամներ, ովքեր ոչ մի եկամուտ չունեն, կամ ընտանիքում լինեն երեխաներ ու կենսաթոշակառուներ: Նրանք ստիպված կլինեն ունենալ մասնավոր ապահովագրություն, սակայն, եթե նման անձն ունի մինչեւ վեց տարեկան երեխա, ապա, նրան վերապահվում է համընդհանուր առողջապահության ծրագրից օգտվելու իրավունք: Եթե նա ունի կենսաթոշակառու ծնողներ, ապա նրանց համար էլ վերոնշյալ սպասարկումը կպահպանվի»,- հայտարարեց Դավիթ Սերգեենկոն:

Նախարարի հավաստմամբ, միջին եկամուտով Վրաստանի քաղաքացիների թիվը կազմում է մոտավորապես 300 հազար մարդ: Դրանք այն քաղաքացիներն են, ում ամսական աշխատավարձը տատանվում է 900-ից մինչեւ 3700 լարի եւ, ում տարեկան եկամուտը չի գերազանցում 40 հազար լարին: Նրանց անհետաձգելի ստացիոնար բուժումը, նախկին 100-ի փոխարեն, կֆինանսավորվի 90 տոկոսով: Ծրագրված ստացիոնարը, եթե ծախսերը կազմում են մինչեւ հազար լարի, կֆինանսավորվեն 70 տոկոսով, հազար լարիից ավելի ծախսի դեպքում՝ դրանք չեն ֆինանսավորվի: Նրանք զրկվում են միաժամանակ մասնավոր եւ պետական ապահովագրական սպասարկումներից օգտվելու իրավունքից:

Ցածր եւ ոչ կայուն եկամուտներով քաղաքացիները, անչափահասները, ամսական 900 լարիից նվազ եկամուտով քաղաքացիները եւ աշխատանքով ինքնապահովված քաղաքացիները, ովքեր կազմում են 1 միլիոն 154 հազար մարդ, անհետաձգելի ամբուլատորային սպասարկման 100 տոկոսի դիմաց կֆինանսավորվեն 50 տոկոսով: Նրանց համար անփոփոխ է մնում ամբուլատորային ծրագրված եւ անհետաձգելի ստացիոնար բուժումը: Ծրագրված ստացիոնար բուժումը կֆինանսավորվի այն դեպքում, եթե ծախսերը չեն գերազանցում 500 լարին: Բացի այդ, այդ խմբի ներկայացուցիչները կարող են միաժամանակ օգտվել համընդհանուր առողջապահության եւ մասնավոր ապահովագրության փաթեթով նախատեսված սպասարկումներից:

Ինչ վերաբերում է այն քաղաքացիներին, ովքեր գրանցված են սոցիալապես անպաշտպանների ռեեստրում եւ ունեն 70 հազարից մինչեւ 100 հազար վարկանիշային միավոր, իսկ նմանների թիվը կազմում է 102 հազար մարդ, ապա, նրանց համար համընդհանուր առողջապահության ծրագրով նախատեսված բոլոր սպասարկումները լրիվությամբ պահպանվում են: Միաժամանակ, նրանց վերապահվում է համընդհանուր առողջապահության ծրագրով եւ մասնավոր ապահովագրության փաթեթով սպասարկումներից միաժամանակյա օգտվելու իրավունք:

6-ից մինչեւ 18 տարեկան անչափահասների համար, որոնց թիվը Վրաստանում կազմում է 503 հազար, համընդհանուր առողջապահության ծրագրով սահմանված բոլոր սպասարկումները մնում են անփոփոխ: Նրանց շնորհվել է նաեւ համընդհանուր առողջապահության ծրագրով եւ մասնավոր ապահովագրական փաթեթով նախատեսված սպասարկումներից միաժամանկյա օգտվելու իրավունք:

Ինչպես նշեց նախարարը, ծննդաբերության եւ կեսարյան հատումով ֆինանսավորումը, անկախ սոցիալական պատկանելության, բարձր եւ միջին եկամուտ ունեցողների եւ աղքատների համար կպահպանվի առանց բացառության:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ՈՒՉԱ ՆԱՆՈՒԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՂ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԸ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

Վրաստանի ժողովրդական պաշտպանը հանձնարարականով դիմել է երկրի կառավարությանը՝ Վրաստանի շուկայում գտնվող խաղալիքների եւ անչափահասների առողջության պաշտպանության նպատակով միջոցառումների անցկացման կապակցությամբ:

Ինչպես նշված է ժողովրդական պաշտպանի աշխատակազմի հայտարարության մեջ, հայտնի է դարձել, որ «Վրաստանի ռազմավարական հետազոտությունների եւ զարգացման կենտրոնը Թբիլիսիի խանութներում գնված տասը անուն տիկնիկները, ստուգման համար, խաղալիքների անվտանգության ուսումնասիրության Գերմանիայում հավաստագրված լաբորատորիա է ուղարկել: Ստացված պատասխանների համաձայն, տասը տիկնիկներից ինը պարունակում են առողջության համար վտանգավոր նյութեր:

«Ցավոք, Վրաստանի օրենսդրության մերձեցումը՝ խաղալիքների անվտանգության մասին Եվրամիության նոր մոտեցման հիմնադրույթներին, ծրագրված է միայն 2019 թվականի համար: Վրաստանի ժողովրդական պաշտպանը գտնում է, որ, ելնելով Վրաստանի ռազմավարական հետազոտությունների եւ զարգացման կենտրոնի կողմից անցկացրած ուսումնասիրությունների արդյունքներին, կատարելու գործուն քայլեր՝ շուկայում վերահսկողության հաստատման տեսանկյունից, եւ մինչեւ 2019 թվականը կիրարկել խաղալիքների անվտանգության մասին հիմնադրույթի պահանջները»,- ասված է ժողովրդական պաշտպանի աշխատակազմի հայտարարության մեջ:

Ինչպես նշված է ժողովրդական պաշտպանի աշխատակազմի հայտարարության մեջ, հայտնի է դարձել, որ «Վրաստանի ռազմավարական հետազոտությունների եւ զարգացման կենտրոնը Թբիլիսիի խանութներում գնված տասը անուն տիկնիկները, ստուգման համար, խաղալիքների անվտանգության ուսումնասիրության Գերմանիայում հավաստագրված լաբորատորիա է ուղարկել: Ստացված պատասխանների համաձայն, տասը տիկնիկներից ինը պարունակում են առողջության համար վտանգավոր նյութեր:

«Ցավոք, Վրաստանի օրենսդրության մերձեցումը՝ խաղալիքների անվտանգության մասին Եվրամիության նոր մոտեցման հիմնադրույթներին, ծրագրված է միայն 2019 թվականի համար: Վրաստանի ժողովրդական պաշտպանը գտնում է, որ, ելնելով Վրաստանի ռազմավարական հետազոտությունների եւ զարգացման կենտրոնի կողմից անցկացրած ուսումնասիրությունների արդյունքներին, կատարելու գործուն քայլեր՝ շուկայում վերահսկողության հաստատման տեսանկյունից, եւ մինչեւ 2019 թվականը կիրարկել խաղալիքների անվտանգության մասին հիմնադրույթի պահանջները»,- ասված է ժողովրդական պաշտպանի աշխատակազմի հայտարարության մեջ:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՐԱՏԱՊ ԹԵՄԱ

ԵՌԱՊԱՏԿՎԵԼ Է ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, ընթացիկ տարվա հունվարի 1-ից կտրուկ ավելացվեցին ներկրվող մեքենաների մաքսազերծման սակագները: Ավելացումն ավելի քան նշանակալից էր, ծախսեկ մեքենաների մաքսազերծման արժեքը կրկնապատկվեց, իսկ աջաղեկերինը՝ հնգապատկվեց: Ներկա դրությամբ, ավտոմոբիլային շուկայում ստեղծված իրավիճակի հարցով մենք դիմեցինք ավտոմեքենաների ներկրմամբ զբաղված «Կավկասուս մոտորս» ընկերության ղեկավար Գիորգի Սուրգուլաձեին:

- Բատոնո Գիորգի, ինչպես հայտնի է, հունվարի 1-ից ավտոմեքենաների մաքսազերծման սակագները կտրուկ ավելացվեցին, թեպետ նշվում է, որ մինչեւ յոթ տարվա թողարկված մեքենաների մաքսատուրքը գրեթե չի փոխվել: Բացի այդ, նվազեցվել են հիբրիդային մեքենաների մաքսազերծման սակագները: Ձեր կարծիքով, վերոնշյալ փոփոխությունների արդյունքում ի՞նչ փոփոխություններ կարող են իրականացվել Վրաստանի ավտոմոբիլային շուկայում:

- Ընդհանուր առմամբ, մաքսազերծման սակագների ավելացումը, անկասկած, դրական երեւույթ է, քանի որ այն կարող է հանգեցնել երկրում ավտոպարկի երիտասարդացմանը: Դրա արդյունքում, մի քանի տարի հետո, Վրաստանի ավտոմոբիլային պարկում կստեղծվի հարեւան երկրների նման իրավիճակ: Բացառված չէ, որ մեծանա նաեւ վերաարտահանման ծավալը, ներկրողներն արդեն հատուկ մեքենաներ չեն ներբերի տեղական շուկայի համար: Վերաարտահանման համար նրանք ստիպված կլինեն դուրս գրել համեմատաբար նոր ավտոմեքենաներ, որոնք հնարավոր կլինի իրացնել ինչպես երկրի ներսում, այնպես էլ՝ նրա սահմաններից դուրս:

Եվս մեկ դրական հանգամանք, որ սակագների ավելացման պայմաններում, բացառված չէ, հիբրիդային մեքենաների պահանջարկի ավելացումը, ինչը դրական ազդեցություն կգործի մեր քաղաքների էկոլոգիական վիճակի վրա: Գործնականում գրեթե լրիվությամբ կդադարեցվի Վրաստան հին եւ աջաղեկ մեքենաների ներկումը: Մյուս կողմից, դա որոշակիորեն կնվազեցնի երկրից դոլարի արտահոսքը, ինչը զգալիորեն կկայունացնի ազգային տարադրամը:

Ինչ վերաբերում է ներկրողներին, ապա, հիմնականում լուրջ խնդիրներ կծագեն նրանց առջեւ, ովքեր մեքենաներ են ներկրում Ճապոնիայից, իսկ նրանք, ովքեր աշխատում են Եվրոպայի եւ ԱՄՆ-ի ուղղությամբ, հեշտությամբ կարող են հարմարվել նոր պայմաններին: Այնպես որ, Ճապոնիայից ներկրողները ստիպված կլինեն դադարեցնել գործունեությունը կամ վերափոխվեն ԱՄՆ-ի եւ Եվրոպայի ուղղությամբ:

- Ինչպես նշվեց, բոլորից շատ ավելացավ աջաղեկ մեքենաների մաքսազերծման սակագինը: Այլընտրանքային ի՞նչ հնարավորություններ կան էժան ավտոմեքենաների ձեռքբերման համար: Որքանո՞վ է իրատեսական, համեմատաբար ցածր գներով ծախսեկ որակյալ մեքենաների ձեռքբերումը:

- Ցավոք, նախորդ գներով ներկայումս մեքենա գնելը հնարավոր չի լինի: Թեպետ կլինեն էժան հիբրիդային մեքենաներ, որոնք նշանակալիորեն թանկ են, սակայն համեմատաբար մատչելի կլինեն միջին գնորդների համար:

- Իսկ ի՞նչ փոփոխություններ կլինեն ներկրման կառույցում, ո՞ր մեքենաները կարող են փոխարինել աջաղեկերին:

- Արդեն այսօր կտրուկ աճել է հիբրիդային եւ էլեկտրամոբիլների պահանջարկը: Մասնավորապես, մաքսազերծման սակագների ավելացման պահից մեր ընկերությունում կտրուկ աճեց հիբրիդային մեքենաների պատվերների թիվը: Եթե մինչ այդ ընկերությանը ներկայացնող պատվերների թվում հիբրիդայինների բաժինը կազմում էր 20 տոկոս, ապա ներկայումս հասել է 70 տոկոսի: Նշանակալիորեն աճել է նաեւ էլեկտրամոբիլների պատվերների թիվը:

- Հատկանշական փաստ է. էլեկտրամոբիլների մաքսազերծման սակագինը զրոյական է, սակայն այդ մեքենաները Վրաստանում լայն ընդունելության չեն արժանացել: Ձեր կարծիքով, ինչո՞վ է դա պայմանավորված. մեքենաների բարձր գնո՞վ, թե՞ մեր բնակչության մտածելակերպով:

- Չեմ կարծում, որ դա կախված է մտածելակերպից: Կարծում եմ, խնդիրը բարձր գինն է, թեպետ կան նաեւ էժան էլեկտրամոբիլներ: Տվյալ պարագայում գլխավոր հիմնախնդիրը համապատասխան սպասարկման եւ պահեստային դետալների անբավարարությունն է: Եթե Վրաստանում շարքից դուրս գա թեկուզեւ էլեկտրամոբիլի աննշան դետալը, ապա դա փոխարինել հնարավոր չի լինի:

- Ինչպե՞ս արձագանքեց Ձեր ընկերությունը սակագների ավելացմանը, ի՞նչ ռազմավարություն եք մշակել նոր պայմաններին հարմարվելու համար:

- Մենք մեքենաներ ենք ներկրում ինչպես Ճապոնիայից, այնպես էլ՝ Եվրոպայից ու Ամերիկայից: Հետեւաբար, նոր պայմանները մեզ համար առանձնակի հիմնախնդիրներ չեն առաջացնում, թեպետ, բնականաբար, ռազմավարական փոփոխություններ իրականացրել ենք:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ